

ԱՊՐԻԼԵԱՆ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻՒ 2433 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 22 ԱՊՐԻԼ 2024
• VOL. XLIII, NO 2433 • 22 AVRIL 2024 • MONDAY, 22 APRIL 2024



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՐԲԵՔ ԹԻՒ ՉԷ, ԱՅԼ ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԸ ՈՉՆՉԱՑՆԵԼ ՄԻՏՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

Մենք չենք կրնար մոռնալ Հայոց Յեղասպանութիւնը եւ յարգելով մեր մէկ ու կէս միլիոն նահատակներէն իւրաքանչիւր մարտիրոսի յիշատակը՝ որպէս պահանջատէր, հաւատարիմ կը մնանք մեր արդար դատին եւ կը շարունակենք մեր պայքարը:

ԱՍՏ ՇԻՖ. «ԱՄՆ-ՈՒ ԿՈՂՄԷ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՊԷՏԷ Ե ՅԱԶՈՐԴԵՆ ԻՐԱԿԱՆ ՀԵՏԵՄԱՆԵՆԵՐ»

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Կոնգրեսի անդամ Ատամ Շիֆ կարծիք յայտնած է, որ ԱՄՆ-ու կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումէն և դատապարտումէն ետք պէտք է ըլլան իրական հետեւանքներ, քանի որ միայն խիստ յայտարարութիւններ ընելու ժամանակը վաղուց անցած է:



«Արմէնիքս»-ի հաղորդմամբ՝ այս մասին ան յայտարարած է Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին, ինչպէս նաեւ Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին նըւիրուած՝ «Արդարութիւն յանուն ցեղասպանութեան» միջոցառման ընթացքին:

«Մինչ մենք կ'ոգեկոչենք Հայոց Յեղասպանութեան 109-րդ տարելիցը՝ երբեք չկրկնուելու խոստումներով, ժողովրդավար եւ խաղաղ հայ ժողովուրդը դէմ յանդիման է իր ամենամութ օրերը յիշեցնող սպառնալիքներուն:

Վարչակազմի կողմէ միայն խիստ յայտարարութիւններով հանդէս գալու ժամանակը վաղուց անցած է: Դատապարտման պէտք է յաջորդեն իրական հետեւանքներ», - ընդգծած է կոնգրեսականը՝ համոզումը յայտնելով, որ մարդկութեան դէմ յանցագործութիւնները պէտք չէ անտեսուին եւ կարելի չէ անպատասխան մնալ:

ՃՈՒՏԻ ՉՈՒ. «ԱՏՐՊԷՅՃԱՆԸ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՑԱԾ Ե ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՅԵՐՈՒ ՆԿԱՏԱՍԲ»

ԱՄՆ կոնգրեսական Ճուսի Չոն յայտարարած է, որ ան կը շարունակէ աշխատիլ Կոնգրեսի հայկական հարցերով յանձնախումբի գործընկերներու հետ, որպէսզի Ատրպէյճանին պատասխանատուութեան ենթարկեն Լեռնային Ղարաբաղի մէջ էթնիկ զրտումներ իրականացնելու եւ աններելի վայրագութիւններ կատարելուն համար:



«Արմէնիքս»-ի հաղորդմամբ՝ այս մասին ան յայտարարած է Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին, ինչպէս նաեւ Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին նըւիրուած՝ «Արդարութիւն յանուն ցեղասպանութեան» խորագրով միջոցառման ընթացքին:

«Ատրպէյճանն էթնիկ զտումներ իրականացուցած է Լեռնային Ղարաբաղի 120 հազար հայերու նկատմամբ: Ես ինքս Արցախ այցելելու պատիւ ունեցած եմ: Ես տեսած եմ այնպիսի անհամարժեք մարդկանց՝ ծաղկուն համայնքով, եւ ինծի այնքան ցաւ կը պատճառէ նոյնիսկ միայն մտածելը, որ անոնց քշած են այնտեղէն, եւ որ անոնցմէ շատեր մինչ օրս բանտարկուած են: Այսպիսով, մենք պէտք է ընենք այն ամէնը, ինչ որ կրնանք: Ահա թէ ինչու ես կը շարունակեմ աշխատիլ Կոնգրեսի հայկական հարցերով յանձնախումբի գործընկերներու հետ Ատրպէյճանին այս աններելի վայրագութեան համար պատասխանատուութեան ենթարկելու», - նշած է Չոն:

2024 ԱՊՐԻԼԵԱՆ ԽՈՂԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԹԷ ՍՓԻՒՔ՝ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱՐԱԿԱՆ ԼՃԱԿՆԵՐՈՒՄ ԶԾՐԱՅՈՒՄ Է

Օրացոյցի անխախտելի օրինաչափութեան ընթացքով, ահա այս տարի եւս կը թեւակոխենք Մեծ Եղեռնի նշման Ապրիլեան օրերը: Այս անգամ անոր 109-րդ տարելիցը:

Ամէն տարի, Կաղանդ, Ծընունդ կամ Զատիկ կանոնաւորութեամբ նշելու նման, նոյնպէս ալ հայ ժողովուրդը այս օրերուն՝ Ապրիլի 24-ին կամ անոր շուրջ, կ'ոգեկոչէ Մեծ Եղեռնը: Եկեղեցական թէ քաղաքական տարբեր միջոցառումներով մէկ կողմէ կը ձգտինք յարգել այժմ սրբացած մէկ ու կէս միլիոն մեր նահատակներուն յիշատակը, իսկ միւս կողմէ ալ, դժբախտաբար, երթալով տկարացող փորձեր կը կատարենք արդարութիւն եւ հատուցում պահանջելու համար յանցագործ թուրքիայէն եւ ամբողջ աշխարհէն, աւելի քան մէկ դար առաջ մեր ազգովին կրած անդարմանելի կորուստներուն համար:



Այս տարի սակայն, այս յօդուածը կը գրենք ահագանգ հնչեցնելու համար եւ ստորագծելու համար թէ համաշխարհային քաղաքական կրկեսին մէջ այլեւս հայ ժողովուրդին համար տուեալները եւ տրամադրութիւնները անհամեմատօրէն ավելի լուրջ եւ մտահոգիչ են քան եղած են երբեքից, գրեթէ ամբողջ անցեալ մէկ դարու ընթացքին:

Մինչ պարզապէս սովորութիւնը շարունակելով, արդէն իսկ ամէն կողմ կը կատարուին դասական կաղապարով Ապրիլեան նշումները, այս յօդուածով կ'ուզենք առաւելագոյն ուժգնութեամբ ցնցել Հայաստանեան թէ Սփիւռքեան ղեկավար եւ պատասխանատու շրջանակները, յայտնելու համար թէ այսօրուան պայմաններուն մէջ եթէ պարզապէս սահմանափակուինք եւ բաւարարուինք սովորական այսպիսի նշումներով, իսկապէս լրջութեան ահաւոր պակաս մը ցուցաբերած պիտի ըլլանք մեր ազգային սուրբ դատին, մեր բիրաւոր նահատակներուն եւ մանաւանդ մեր հայրենիքի գոյութեան իսկ վտանգող սպառնալիքները զսպելու համար ունեցած մեր պարտականութեանց նկատմամբ:

Արդարեւ, բոլոր անոնց համար որոնք անկողմնակալ, եւ վերլուծական սուր աչքով, կը հետեւին հայ ժողովուրդը առնչող ազգային քաղաքական ընթացիկ զարգացումներուն, ակնյայտ է թէ վերջին շրջանին եւ յատկապէս վերջին տարուան ընթացքին, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ ազգային դիմադրողականութեան գործօնները արագընթաց կ'երթան դէպի լուրջ տկարացում: Եթէ արտասովոր ջանքերով ու համազգային գիտակից ծրագրումով, չկատարուին լուրջ վերակազմակերպման աշխատանքներ, դիմադրականութեան այդ տկարացումը անխուսափելիօրէն պիտի յանգի իսկական անդառնալի ազգային ընդհանուր ամլացման:

Այս իմաստով առաջին հերթին չափազանց մտահոգիչ է այսօր կացութիւնը նոյն ինքը հայրենիքին մէջ:

Ներքին թէ արտաքին ճակատներու վրայ տեղի ունեցող կարևոր զարգացումները ամէն օր ավելի կը տկարացնեն, դժբախտաբար արտագաղթով և այլ պատճառներով, այսօր երկրին եւ ժողովուրդին ունեցած արդէն իսկ դիրաբեկ ազգային դիմադրականութիւնը:

Այս մտահոգիչ զարգացումներուն պատասխանատուութիւնը անխուսափելիօրէն եւ փաստօրէն առաջին հերթին կ'իյնայ օրուան իշխանութեան ուսերուն վրայ: Այստեղ կ'ուզենք ստորագծել թէ այս նկատողութիւնը կը կատարենք բոլորովին անկախաբար որեւէ յատուկ անձի մը կամ կազմակերպութեան մը դէմ մրցակցական կամ այլ տեսակի պայքարի մը մասնակցելու կարճատես դիտաւորութենէն: Արդարեւ Հայաստանի Հանրապետութեան մայր հայրենիքին՝ գոյութեան կանաչապաղ այսօր, շատ ավելի լուրջ է քան մրցակցական կամ կողմնակցական որեւէ նկատում:

Քանի որ արդէն իսկ այս նիւթը կրկնակիօրէն արծարծած ենք թէ մենք եւ թէ ահագանգ հնչեցնող տարբեր աղբիւրներ, յիշեցման ձեւով, կարելորագոյն քանի մը տուեալներն են միայն, որ պիտի թուարկենք:

2024 ԱՊՐԻԼԵԱՆ...

Շար. - էջ 1- Էն

Խօսելով ներքին ճակատին մասին, հայրենիքին ներքին կեանքին մեջ, բոլորովին անընդունելի է դատապարտելի են, Թուրք-Ազերի ակնյայտ ճնշումներուն տակ, բարձրագոյն մակարդակներու վրայ, իշխանութեանց կողմէ վերջերս առաջ քաշուող հակազգային առաջարկներու շարքը որոնց կարգին՝ ազգային սրբազոյն նշանաբան Արարատ լեռը զինանշանէն վերցընելու առաջարկը, Նոյնքան անընդունելի են դասագիրքերու մէջ ազգայնական ամանական խրոխտ արտայայտութիւնները վերացնելու, Սահմանադրութենէն եւ այլ պաշտօնական արտայայտութեանց միջոցներէն պահանջատիրական դասական դրսեւորումները վերացընելու առաջարկները եւայլն:

Արտաքին ճակատին վրայ, Նոյնքան եւ անելի մտահոգիչ է Հայաստանին ներկայիս վարած խեղճացած, պարտուողական քաղաքականութիւնը:

Արդարեւ իշխանութիւնը, խաղաղութիւն հետապնդելու թէն անվիճելիօրէն ազնիւ պատրուակով, գործնականին մէջ, որդեգրած է իր ռիսկերիմ դրացիին տարածքային բոլոր պահանջներուն հնազանդօրէն եւ միակողմանի ենթարկուելու, կործանիչ եւ մանաւանդ ապարդիւն քաղաքականութիւնը: Այս քաղաքականութեան մեծագոյն գոհը հանդիսացաւ ամիսներ առաջ քանի մը ժամուայ մէջ ամբողջ Արցախի կորուստը:

Կործանիչ է այս քաղաքականութիւնը մանաւանդ, որովհետեւ ակնյայտ է թէ ռիսկերիմ Ալիեւին պահանջները վերջ չունին: Աւելի ճիշդը անոնց իսկական վերջը Հայաստանի Հանրապետութեան ամբողջական վերացումն է:

Յաջորդաբար, խոր մտահոգութեամբ պետք է նշենք թէ Հայաստանի արտաքին քաղաքականութեան նորագոյն անհեռատես եւ անպատրաստ նախաձեռնութիւնը հանդիսացաւ Ապրիլ 5-ին՝ Պրիքսէլեան գագաթնաժողովին ցուցադրական մեծ բեմադրութիւնը: Անոր յաջորդող օրերուն, արդէն իսկ ամէն օր քիչ մը անելի կը յայտնուին այդ ժողովէն ակնկալուած ենթադրեալ մեծ արդիւնքներուն ետին գոյութիւն ունեցող, ընդհակառակը իսկապէս ծանր եւ մտահոգիչ հետեւանքները:

Արդարեւ իշխանութիւնը ենթադրաբար այլապէս օգտակար դառնալիք, Պրիքսէլեան 180 աստիճան դէպի Արեւմուտք շրջադարձը կատարեց, ակնյայտօրէն առանց ինքզինք պատրաստած ըլլալու այդ շրջադարձէն բխելիք ռազմական, դիւանագիտական եւ տնտեսական լրջագոյն հետեւանքներուն: Թէ Հայաստանի իշխանութիւնները եւ թէ ժողովուրդը, դժբախտաբար արագօրէն պիտի անդրադառնան թէ քանի մը հարիւր միլիոն տղարներու օժանդակութիւնը եւ անոնց հետ Հայաստանի ի նպաստ Պրիքսէլի մէջ շռայլուած գովաբանական արտայայտութիւնները եւ խոստումները խաբկանք մը կրնան մնալ միայն քանի որ Նոյն ժամանակ, ռազմական եւ ռազմագիտական աջակցութեան եւ ուղիղ պաշտպանութեան հաւաստիք չտրուեցաւ Հայաստանին:

Ահա այս բոլորը նկատի առնելով, Ապրիլեան լրջագոյն այս խոկումներուն առիթով, ստիպողաբար կը վեր-յիշեցնենք ոչ միայն Հայաստանի իշխանութեանց, այլ նաեւ ընդդիմութեան, մտաւորական, կուսակցական եւ այլ պատասխանատու շրջանակներուն, ինչպէս նաեւ ամբողջ ժողովուրդին, թէ այսօր անելի քան երբեք բոլոր միւս նախաձեռնութիւններէն առաջ, Հայաստան պետք է գերագոյն առաջնահերթութիւն նկատէ մէկ կողմէ իր բոլոր կարող ոյժերու մասնակցութեամբ մշակել ազգային փրկութեան միացեալ քաղաքականութիւն մը, եւ միւս կողմէ իրականացնել Հայաստանի սահմաններուն պաշտպանութեան համար ռազմական գերարդիական անխոցելի բանակ մը և համակարգ մը:

Այս երկու ազդակներու հզորացումը ապահովելէն ետքն է միայն, եւ պատերազմի բարձրագոյն մակարդակով պատրաստ ըլլալէն ետքն է միայն որ Հայաստան արդարօրէն կրնայ ինքզինքին թոյլ տալ ձեռնարկելու դիւանագիտական անկաշկանդ եւ յախուռն տարբեր գործառնութեանց:

Ապրիլեան մեր խոկումներուն միւս առանցքը կը վերաբերի հայ աշխարհի միւս բեւեռին որուն մակերեսային հեշտութեամբ կ'ակնարկենք որպէս Սփիւռք: Այս մէկ բառով ակնարկուած մեր ժողովուրդին բազմամիլիոն մեծագոյն հատուածը, յաճախ կը մոռնանք թէ տառաջիօրէն տարածուած է մոլորակին գրեթէ ամբողջ մակերեսին վրայ: չեւտեաբար բոլորովին

անիրատեսական է երբ յաճախ պատասխանատու շրջանակներու մէջ եւ կարեւոր դիրքերու վրայ գտնուող անհատներ կը խօսին «Սփիւռքի կեցուածքին», «Սփիւռքի խորհածին» կամ «Սփիւռքէն ակնկալուածին» մասին որպէս կարեւոր ազգային միակտուր գործօն որ պարտի տարբեր ձեւերով օժանդակել համազգային պահանջներու իրականացման:

Թանկագին հայրենակիցներ, Ապրիլեան այս օրերուն ժամանակն է որ Սփիւռքի մէջ ի վերջոյ լրջութեամբ եւ իրատեսութեամբ որդեգրենք այնպիսի կեցուածք մը որ Սփիւռքը դառնայ իսկական կարեւոր ազգային գործօն մը, որ կարող ըլլայ իր մեծ նպաստը բերելու հայրենիքին եւ ազգին գոյատեւման պայքարին:

Կրկնութիւն ըլլալով վերահաստատենք թէ բազմամիլիոն անհատներով գոյացած Սփիւռքը իսկապէս հարուստ է մտաւորական եւ նիւթական բարձր կարողութեան տէր եւ բացառիկ յաջողութեանց հասած անհատներով: Մանաւանդ՝ Հայ Սփիւռքը անելի քան մէկ ամբողջ դար իր գոյութեան տարիներուն ընթացքին, բարեբախտաբար կարողացած է իր մէջ ստեղծել տարբեր ուղղութիւններ ունեցող, քաղաքական, մշակութային, բարեսիրական եւ եկեղեցական նկարագրով, կարեւոր կազմակերպութիւններ որոնց շնորհիւ է միայն որ ան իրաւունք ստացած է կոչուելու «Հայ Սփիւռք»: Սակայն Սփիւռքի տարբեր այս մասնիկներուն միջեւ եթէ կան տեղ տեղ անելի կամ պակաս համադրողական կապեր, իր ամբողջութեան մէջ ան կը մնայ մեծ հաշուով առաւելաբար ցրուած եւ հետեւաբար նաև համաշխարհային բեմին վրայ շատ փոքր կարողականութիւն ցուցաբերող համախմբում մը:

Հայ Սփիւռքին այս անկարողութեան կարծր փաստը խոր յուսախաբութեամբ ապրեցանք մանաւանդ մտաւոր անցնող տարիներուն եւ ամիսներուն ընթացքին: Մինչ Հայաստան եւ Արցախ, ամբողջ քաղաքակիրթ կոչուած աշխարհին անտարբեր աչքերուն տակ կ'ապրէին մեր պատմութեան ամենաողբերգական շրջաններէն մէկը, այնքան կարեւոր նկատուած Սփիւռքը չկարողացաւ դոյզն իսկ ազդեցութիւն ցուցաբերել, թեթեւցնելու եւ Նոյնիսկ առաջը առնելու համար այդ ողբերգութեան: Այս գեր կարեւոր նիւթը ամիսներ առաջ շեշտուած կերպով արծարծեցինք այս էջերուն մէջ կոչ ուղղելով Սփիւռքի բոլոր ղեկավար շրջանակներուն, քաջութիւն եւ համարձակութիւն ցոյց տալ նախաձեռնելու համար համադրուած Սփիւռքահայ քաղաքական միացեալ կառոյցի մը ստեղծումը, որ օժտուի նիւթական, մտաւորական, օրինական եւ այլ, այսօր դիւրաւ մատչելի, բոլոր ազդակներով:

Վերջապէս, անշուշտ այս բոլորին վերջնական նպատակն է, որ Սփիւռքի այս կառոյցը, գործակցաբար մեր վերը յիշած Հայաստանի համապատասխան մարմիններուն հետ, կազմէ **ՀԶՕՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ** մը:

Այսուհետեւ, այդպիսի տոկուն համակարգ մը անհրաժեշտ է, որպէսզի, լրատուական, դիւանագիտական տնտեսական եւ ռազմական գետնի վրայ, Հայաստան կարենայ յաջողութեամբ դիմադրել յաջորդական բազմաթիւ տարիներուն ընթացքին իր դէմ կատարուելիք, նախատեսելի բոլոր յարձակումներուն:

Ապրիլեան խոհերու ծիրին մէջ ընդհանուր այս ակնարկին այս եզրակացութիւնը անխուսափելիօրէն շատ պարզ եւ տրամաբանական է: Սակայն անշուշտ գիտակից ենք թէ անոր գործադրութիւնը իրատեսօրէն աննախադէպ ըլլալով Նոյնքան ալ շատ դժուար է:

Սակայն ինչպէս շեշտեցինք այս յօդուածին սկզբնաւորութեան, եթէ Հայ Աշխարհը բաւականանայ այս օրերուն կատարուող Ապրիլեան դասական նշումներով, այսօրուան իշխանութիւնը, ընդդիմութիւնը, կուսակցական, եկեղեցական կամ մտաւորական, ամբողջ ղեկավարութիւնը հաւաքաբար, պատասխանատու պիտի նկատուին, մօտ թէ անելի հեռաւոր ապագային սպասուած գոյութեան կամ ողբերգական տազնապներուն բոլոր տխուր հետեւանքներուն համար:

Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ ղեկավարութեան յաւակնութիւն ունեցողները, բոլորը պարտին գերագոյն ճիգերով վար առնել նախատեսելի բոլոր պատնէշները, որպէսզի եթէ ոչ կատարելութեամբ, սակայն գոնէ մեծ չափով յաջողութեամբ դիմագրաւենք այս մեծ մարտահրաւերը, ապահովելու համար հայ պետականութեան պատուաւոր վերապրումը, եւ մեր պարտքը եւ յարգանքը իսկապէս կատարած ըլլանք մեր սրբացած բիրաւոր նահատակներուն յիշատակին:

ԳՈՒՏ. ԱՐԵՎԻԻ ԿԵՆՆԵԱՆ

ՓԻԵՆ Տ'ԱՐԳՐԵՆ. «ԱԼԻԵԼ Լ. ՂԱՐԱԲՂԻ ՄԷՋ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՅԱԾ ՏԵՂԱՅԻՆ ԶՏՈՒՄԸ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ ԿԱՆՈՒԱՆԷ»

ՄԱԿ-ի դատարանին մէջ Հայաստանի ներկայացուցիչ՝ Փիեռ տ'Արգընը յայտարարած է, որ «Հայաստանը ԸՆդդէմ» Ատրպէյճանի գործով լուսմներու ընթացքին աստիպէյճանական կողմը կը ձգտի քննարկումներէն դուրս ձգել Հայաստանի որոշ պնդումներ ու պահանջներ, որոնք կը վերաբերին Ատրպէյճանի կողմէն բնիկ հայերուն նկատմամբ իրականացուած բռնութիւններուն: Փիեռ տ'Արգըն «Հայաստանը ԸՆդդէմ Ատրպէյճանի» գործով լուսմներու ընթացքին նշեց, որ Ատրպէյճանի երկրորդ նախնական առարկութեամբ փորձ կը կատարուի քննարկումէն դուրս ձգել Հայաստանի որոշ պնդումներ Ատրպէյճանի կողմէն բնիկ հայերու կամայական բանտարկութեան, ծրագրեալ անհետացումներուն մասին, ինչպէս նաեւ Հայաստանի պահանջները հայերուն նկատմամբ կատարուած բռնութեան տարբեր գործողութիւններու մասին: Անոր խօսքին համաձայն, Լեռնային Ղարաբաղի մէջ անձինք թիրախաւորուած են միայն անոր համար, որ հայ են:

ԱԶԱԳԱՅ
Շարաքաթերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ՍԷՏԻՍ ՂԱԳՈՒՆԵԱՆ

Ծանուցումներու նուիրատուութիւններու եւ գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԲԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԾ Բ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

ԳՈՒՏ. ԱՐԵՎԻԻ ԿԵՆՆԵԱՆ

ԴՈՎՏ. ԴՈՐԱ ՍԱՔԱՅԵԱՆ. «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ ՕՏԱՐԱԶԳԻ ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐՈՒ ԿԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՏ ԿԱՐԵՒՐ ԵՆ»

ՅԱՏՈՒԿ «ԱՊՐԱՎԱՅ» ԸՆԲՐԱԹԱԹԵՐՈՒՆ

Հազուագիտ կը պատահի, նամանաւանդ այս օրերուն, որ մենք կրնանք կարդալ եւ խօսիլ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ կարեւոր վկայագրի մը մասին, որ աշխարհին կը ներկայանայ երեք լեզուներով՝ գերմաներէն, հայերէն եւ անգլերէն: Սոյն գիրքի կապակցութեամբ հեղինակին քանի մը հարց կու տանք:

1- Թանկագին Դոկտ. Դորա Սաքայեան, Թեքեան Մշակութային Միութեան եւ «ԱՊՐԱՎԱՅ» շաբաթաթերթի վարչութիւններու անունով նախ կու գանք շնորհաւորելու ստեղծագործական Ձեր նոր սխրանքին՝ «Նրանց քշում են անապատները...» գիրքին առթիւ:


Վերջերս իրար ետեւ եւ տարբեր լեզուներով հրատարակուած այդ գիրքը նուիրուած են նոյն նիւթին՝ Հայոց Ցեղասպանութեան ընթացքին պատահած դէպքերուն, պատմական Կիլիկիոյ տարածքին մէջ: Կը խնդրենք մեր ընթերցողներուն ներկայացնէք թէ ինչպէս ըսկիզբ առաւ այս հսկայական աշխատանքը: Արդեօք այն Ձեր մասնագիտական արպտումներու արդիւնք էր, կամ պատեհութիւնը օգնեց, որ այդպիսի բազմազան վաւերագրական տուեալներ ամփոփէք սոյն գիրքին մէջ:



Դոկտ. Դորա Սաքայեան իր գիրքը կը նուիրէ Դրն. Աւետիս Պազգալեանին

2002 թուականին, բախտի բերմամբ թէ պատահմամբ, ձեռքս անցաւ Զուիցերիոյ Ցիւրիխ քաղաքի մէջ գերմաներէնով տպագրուող օրաթերթ «Tages-Anzeiger»-էն յօդուած մը, որ զիս շատ հետաքրքրեց: Յօդուածագիրը՝ թերթի խմբագիր Դանիէլ Զուլթեր (Daniel Suter), ընթերցողներուն առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէր Հայոց Ցեղասպանութեան ականատեսի մը յուշագրութիւնը: Անոր հեղինակը՝ զուիցերիացի բուժքոյր Քլարա Զիգրիստ-Հիլթին (Clara Sigrist-Hilty) 15-էջանոց գրուածքին մէջ կ'ամփոփէր 1915-էն մինչեւ 1918-ը Թուրքիոյ մէջ իր վերապրած ահաւոր փորձութիւնները: Օրաթերթին մէջ կողմնակիօրէն կ'ակնարկուէին Քլարա Զիգրիստ-Հիլթիի թողած նաեւ այլ գրուածքներ եւ յատկապէս կարեւոր օրագրութիւն մը, առանց սակայն տեղեկութիւն տալու այդ նիւթերու աղբիւրներուն մասին:

Տարիներուն ընթացքին հետաքրքրութիւնս Քլարայի անձին եւ անոր գրածներուն հանդէպ չնուազեց, սակայն ո՛չ համացանցին մէջ, ո՛չ ալ Զուիցերիոյ գրադարաններուն մէջ կրցայ իր հեղինակած գործերէն որեւէ մէկը գտնել: Միայն 10 տարի անց, 2012 թ. Մայիսին, ի վերջոյ որոնումներս արդիւնքի հասան: Ցիւրիխի ճարտարագիտական համալսարանի արխիւներէն ձեռք ձգե-



Քլարայի օրագրիւններէն նմուշներ գոթերէն ձեռագիրով

ցի մեծ գանձ մը՝ Զիգրիստ-Հիլթի ընտանիքի գերական ամբողջ ժառանգութիւնը՝ ընդամենը 16 թուայնացուած թղթապանակներ, որ կը պարունակէին օրագրիւններ, նամակներ, կենսագրութիւններ, մահախօսականներ, լուսանկարներ, քարտէսներ եւ մինչեւ անգամ հայերէն գիրք մը, որի մասին պէտք է առանձին խօսիլ: Նիւթերուն մեծ մասը 100-ամեայ վաղեմութիւն ունեցող գործեր էին եւ գրուած էին գոթերէն ձեռագիրով, որ այսօր գրեթէ բոլոր եւրոպացիներուն համար անընթեռնելի էին եւ կարօտ էին լատինատառի վերծանման: Գիրքը մանրամասնօրէն կը նկարագրէ տարիներու ընթացքին ինձմէ պահանջուած աշխատանքը վերծանումներու, արտագրումներու, թարգմանութիւններու եւ ծանօթագրութիւններու համար:


2. Պիտի կարողանայի՞ք մեզի տալ որոշ տեղեկութիւն «Նրանց քշում են անապատները...» գիրքին կառուցուածքին մասին, ինչպէս նաեւ անոր համառօտ բովանդակութիւնը:

«Նրանց քշում են անապատները...» գիրքը բաղկացած է երեք գլուխէ. առաջին երկուքը նուիրուած են զուիցերիացի Զիգրիստ-Հիլթի զոյգին, իսկ երրորդը՝ անոնց օգնութեամբ սպանդէն մագապուրծ եղած հայորդի Հայկ Արամեանին: Այս երեք հեղինակներուն գործերը միահիսուած են որպէս Հայոց Ցեղասպանութեան պատմութեանը նուիրուած նոր վաւերագրութիւն մը:

Ահա՛ եւ գիրքին համառօտ բովանդակութիւնը. 1915 թ. ապրիլ: Իրենց եկեղեցական պատկառըրութեան յաջորդ օրն իսկ ճարտարագէտ Ֆրից Զիգրիստը եւ բուժքոյր Քլարա Հիլթին Զուիցերիոյ Վերդենբերգ քաղաքէն գնացք կը նստին եւ ճանապարհ կ'իյնան դէպի հարաւ-արեւելեան Թուրքիա: Առաջին աշխարհամարտի այդ թեժ տարիներուն Թուրքիան, անշուշտ, իտեալական վայր մը չէր որեւէ զոյգի մը մեղրամիսին համար, սակայն Ֆրիցը 1910 թուականէն ի վեր հոն՝ Պաղտատի երկաթուղային գիծերուն կառուցման վրայ կ'աշխատէր: Անցնելով պալգանեան պատերազմական գօտիին միջով նորապսակ զոյգը բնակութիւն կը հաստատէ պատմական Կիլիկիոյ մէջ՝ Քելլեր (այսօր Ֆեզիփաշա) կոչուող գիւղաքաղաքին մէջ: Այնտեղ անոնք երեք ամբողջ տարի կը բնակին Ամանոսեան լեռներու փէշերուն նստած, աշխարհէն կտրուած բարձրադիր տնակի մը մէջ:

Ճիշդ այդ ժամանակ կ'սկսին հայոց տեղահանութիւնները, եւ ամէն օր հազարաւոր հայեր երթորով կ'անցնին անոնց տնակին քովէն՝ «քալելով անտանելի շոգին, հովէն ու մրրիկէն զգզուած, փոշաթաթախ, անօթի ու ծարաւ...»: Երեք տարի շարունակ զուիցերիացի նորապսակ զոյգը ամէն օր վիրաւոր սիրտով կը դիտէ, «թէ ինչպէս վարը՝ կիրճին մէջ ամէն վայրկեան ճրագներ կը մարին», մինչդեռ իրենք վերը՝ մեկուսի տնակին

մէջ, կ'ապրին իրենց առօրեայ կեանքը. իկրեր կ'ընդունին, տարեդարձներու կրօնական տօներ կը նշեն, ծնողք կը դառնան եւ ընտանեկան երջանկութիւն կը վայլեն: Երկար ժամանակ Քլարան եւ Ֆրիցը տեղեակ չէն, թէ ուր կ'երթան այս դժբախտ մարդիկ: Միայն երբ կ'այցելեն Հայլէպի եւ Կաթմայի համակեդրոնացման ճամբարները եւ կը տեսնեն հայերուն՝ «ամբողջ ժողովուրդի մը կործանումը», կը հասկնան, որ Քելլերի մէջ իրենց տեսածները ոչ այլ ինչ էին,



քան կանխամտածուած մահուան երթեր: Իրադրութիւնը Ֆրիցի համար կը բարդանայ, երբ Պաղտատի երկաթուղու շինարարութեան մասնակից հմուտ հայ բանուորներն ալ հրաման կ'ստանան միանալու այդ մահուան երթերուն:

Քլարան եւ Ֆրիցը շատ բարեացակամ են հալածուած Պաղտատի երկաթուղու շինարարութեան վրայ հայ աշխատողներուն նկատմամբ, բայց օգնելու իրենց կարողութիւնը սահմանափակ է: Ընթերցողին կը ցնցէ արկածային պատմութիւնն այն մասին, թէ ինչպէս 1916 թ. Յունիսին Զիգրիստ-Հիլթի ամուսինները կ'օգնեն իրենց հայ պահեստապետ Հայկ Արամեանին փախուստ տալ թուրք ժանտարմներէն եւ խուսափիլ ստոյգ մահէն:

«ՆԵՐԿԱՅ ՓՈՒԼԻՆ ԵՐԱԶԱՅԻՆ Է ՅՈՒՍԱԼ, ՈՐ ԱՄՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱՐԵԼԱԴՈՒՄ ՄԸ ԱՊՐԻՆ...». ԴՈԿՏ. ՍԱՅԱԿ ԱՆՏԵՔԵԱՆ

ՅԱՏՈՒԿ «ԱՊՐԱԿԱՅ» ԸՆԲՐԱԹԱԹԵՐԹՈՒՆ

Շաբաթներ առաջ, Մոսկուայի մեջ տեղի ունեցած ահաբեկչությունը նաեւ քաղաքական հարթակի վրայ տարբեր ձեւաչափերով քննարկումներու առիթ դարձաւ: Դեպքը ծանրակշիռ էր ոչ միայն Ռուսաստանի համար, այլ այն ունեցած միջազգային մակարդակի արձագանգ: Հիմնական հարցադրումը, որ դրուեցաւ այն էր, թէ ինչու այս փուլին «Իսլամական պետութեան»՝ «Տահէշ»-ի օրակարգը դարձեալ ջուրի երես կը բարձրանայ: Օրերս այս թեմայով հարցազրոյց մը ունեցայ ԱՄՆ-ի մէջ ակադեմական գործունէութիւն ծաւալող, համալսարանի դասախօս՝ Դոկտ. Սահակ Անտէքեանի հետ:

որոնք այսօր կը գտնուին բաւակա- նին բարդ վիճակի մը մէջ:



Մեզմէ շատերուն համար ուշագ- րաւը այն էր որ ISIS-ը («Իսլամական պետութիւն»ը խմբ.՝ Ս. Արեան) կը տարբերի միւս ISIS-էն եւ կը կոչուի «Իսլամական պետութեան Խորա- սանի մասնաճիւղ»: Անոնք վերջե- րս Իրանի մէջ, զօր. Քասէմ Սուլայ- մանի յիշատակի օրը բաւականին մեծ ահաբեկչութիւն կատարած էին եւ հոն եւս մեծաթիւ զոհեր արձանագրուած էին: Նարցումս այն է թէ, ինչո՞ւ այս ISIS-ը Մոսկուայի ընտրեց, որպէս թիրախ: Ինչ կը մտածէք այս ուղղութեամբ:

Ստորեւ հարցազրոյցը.

Դոկտ. Անտէքեան, անցեալ Մարտին Մոսկուայի մէջ տեղի ունե- ցած ահաբեկչութիւնը միայն «ռուսական աւազան»ին մէջ չմնաց, այլ դարձաւ միջազգային լրահոսին կարեւոր առանցքներէն մէկը: Ինչ եղաւ ամերիկեան մամուլին արձագանգը, գիտնալով որ միջազգային հար- թակին վրայ կարգ մը ամերիկեան թերթեր միջազգային հանրութեան քաղաքական կեանքին մէջ կարծիք ձեւաւորող կը համարուին: Կ'ուզէի ձեր դիտարկումները լսել այդ մասին:

ISIS-ի այս մասնաճիւղը բխած է հիմնական ISIS-էն, եւ այս առաջին անգամը չէ որ Ռուսաստանը թիրախ կը դարձնէ: Ասկէ առաջ, Սեպտեմ- բեր 2022-ին ահաբեկչական պայթում մը կատարեցին Քասպուլի Ռուսաս- տանի դեսպանատան դէմ: Իրենց զինեալներէն մէկը նաեւ ահաբեկած էր Թուրքիոյ մէջ Ռուսաստանի դեսպան՝ Քարլովը: Ուրեմն այս առաջինը չէ որ ան Ռուսաստանի դէմ ահաբեկչական գործողութիւն կ'ընեն: Թէ ինչու ներկայիս Ռուսաստանը թիրախ ընտրած են, ապա կան որոշ պատ- ճառներ, նկատի ունենալով, որ Ռուսաստանը 2002-2003 թուական- ներուն ռազմական գործողութիւններ կատարած է Չէչնիոյ մէջ: Այդ մէկը ծայրայեղ իսլամական կարգ մը խումբերու մօտ ռիսկաւարձացում էր: Երկրորդ՝ ինչպէս գիտենք, որ Ռուսաստանը այսօր Սուրիոյ մէջ մեծ դերակատարութիւն ունի, մանաւանդ ռազմական- զինուորական գետնի վրայ, եւ կարգ մը Սիւննի իսլամական շարժումներ կը կարծեն, թէ այդ մէկը իրենց դէմ է: Այս ISIS-ի խումբն ալ, որ ծայրայեղ Սիւննի է, կը կարծէ թէ Սուրիոյ մէջ սիւննիներուն պէտք է թիկունք կանգնի, եւ հետեւաբար այսպիսի գործողութիւններ կ'ընէ: Երրորդ՝ գիտենք որ Ռուսաստանի մէջ մեծ թիւով Սիւննի իսլամներ կան: Երբ ահաբեկչութիւնը տեղի ունեցաւ, լուրերէն իմացանք, որ Չէչնիոյ նախագահի մասնայատուկ ուժերը աւելի առաջ դէպքի վայր հասան, քան ռուսական ուժերը, ցոյց տալու համար որ իբրեւ թէ անոնք պետութեան հետ են, մինչ գիտենք, թէ անոնցմէ բաժին մը ընդդիմադիր է Փութինին:



Կարեւոր հարցում մըն է, այն առումով, որ ներկայիս Ամերիկան եւ Ռու- սաստանը որոշ «թշնամական» մօտեցում ունին իրար հանդէպ: Ինչ որ նկատեցի, նամանաւանդ «Դեմոկրատական» մամուլի դիտանկիւնէն, ձե- տով մը դատապարտեցին ահաբեկչական յարձակումը որ եղաւ «Քրոջոս սիթի հոլ»ին մէջ: Ոչ միայն մամուլը, այլ պաշտօնական գետնի վրայ, նախագահը, պետքարտուղարը դատապարտեցին եղածը: Նկատի առնելով, որ ահաբեկչութիւնը ինքնութիւն չունի, բոլոր պետութիւնները այս վտանգին կրնան ենթարկուիլ: Չոս կարեւոր է նշել նաեւ, որ Ամերիկեան գաղտնի սպասարկութիւնը արդէն փոխանցած էր Ռուսաստանին, որ այսպիսի յարձակում մը կրնայ կատարուիլ 8 Մարտի մօտերը, եւ հաւա- նաբար այդ յարձակումը օրին պիտի կատարուէր սինակոկի վրայ: Որոշ չափով այդ տեղեկութիւնը ճշմարտացի էր, բայց ժամանակը եւ վայրը տարբեր եղան...

Այս բոլորը տեղի կ'ունենան եւ ամբողջ աշխարհը կը հետեւի, մինչ կը մօտենանք ԱՄՆ-ի ընտրութիւններուն: Այս բոլորը ինչ ազդեցութիւն կրնայ ունենալ: Մեր մտքին մէջ անշուշտ կայ Կազայի պատերազմը, որուն մասին տարբեր վերլուծաբաններ նշեցին, որ եթէ շարունակուի, պիտի ըլլայ կարեւոր «քուէարկողներ»էն մին գալիք ընտրութիւններուն: Ձեր կարծիքով, այսօր ռուսական դիտանկիւնը ինչ որ արժէք մը ունի ամերիկեան ներքին քաղաքականութեան խոհանոցին մէջ:

Մենք գիտենք, որ միջազգային յարաբերութիւններուն մէջ, եթէ որեւէ առումով, որեւէ ուղղութեամբ «տիւնամիզմ» մը պիտի մտնէ, այսպիսի ծանրակշիռ դէպքեր կրնան նոր առանցք մը, նոր վիճակ մը ստեղծել: Այս դէպքէն ետք, կը կարծէք որ Ռուս-Ամերիկեան այսքան լարուած յարաբերութիւնները կրնան ինչ որ «տիւնակ»ի մը ճամբան բանալ, թէ այդ մէկը յուսալը ընդհանրապէս «երազային է» այս ժամանակին: Ինչ կը մտածէք:

Անպայման: Ինչպէս գիտենք, ասկէ առաջ, նախկին ընտրութիւննե- րուն, Դեմոկրատները կ'ըսէին, թէ Ռուսաստան ուղղակի միջամտած է Ամերիկայի նախագահական ընտրութիւններուն: Անոր պատճառով ալ որոշ դիրքազգացումներ կամ ձեւով մը թշնամութիւն ստեղծուեցաւ դեմոկ- րատներու կողմէ, Ռուսաստանի հանդէպ: Մեծ պատկերը հասկնալու համար, ընդհանրապէս Դեմոկրատները թշնամական կեցուածք ունին Ռուսաստանի հանդէպ, բայց միւս կողմէ ալ հանրապետականները, մաս- նաւորապէս նախկին նախագահ՝ Տոնըլտ Թրամի գանազան առիթներով ըսաւ, թէ եթէ նախագահ ընտրուի, ապա «Ուքրանիոյ հարց»ը քսանչորս ժամուան ընթացքին պիտի լուծէ: Անշուշտ անկարելի բան մըն է ըսածը, սակայն կը փորձէ message մը ուղղարկել եւ սիրաշահիլ ամերիկացի քուէարկողը, որ արդէն սկսած է ընդվզիլ այս կացութենէն եւ կ'ուզէ դուրս գալ այս վիճակէն, մանաւանդ՝ տնտեսական հարթութեան վրայ: Այսօր նիւթական տեսանկիւնէն դիտուած շատ ծանրաբեռնուած է ամերիկան, զինուորական եւ այլ օժանդակութիւններ ուղարկելով Ուքրանիա: Ամե- րիկայի քուէարկողներէն երկու առ հարիւրը արաբ կամ իսլամ են: Անոնց մեծ մասը, ինչպէս վիճակագրութիւնները ցոյց կու տան, փոխած են իրենց միտքը: Նախքան Կազայի խնդիրը, արաբները կամ իսլամները աւելի Դեմոկրատներու կողմն էին, բայց Պայտընի ենթակայութիւնը Իսրայէլին շատ ընդվզում ստեղծած է արաբ կամ իսլամ քուէարկողին մօտ: Անոնց մէկ մասը պիտի չքուէարկէ, այսինքն ամբողջովին պիտի «պոյքթ» ընտրութիւնները, իսկ միւս մասը իր միտքը փոխած ու Թրամիին կողմը անցած է: Եւ ասիկա պզտիկ թիւ մը չէ, հետեւաբար բաւական բան կրնայ փոխուիլ:

Ասիկա ցոյց կու տայ, թէ Ամերիկան բաւական յառաջդիմած է IT-ի «էսփիոնաժ»ի գետնի վրայ, հետեւաբար կը կարծեմ, որ այս դիտանկիւ- նէն բաւական դրական զարգացումներ պիտի ըլլան Ամերիկայի եւ Ռու- սաստանի միջեւ, սակայն, ինչ որ մեծ պատկերին կը վերաբերի, չեմ կար- ծեր որ այս մէկը կը ջերմացնէ կամ կը փափկեցնէ փոխարաբերութիւնները,

Սագո Արեան

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 22 AVRIL 2024

L'aide américaine et européenne à l'Arménie non seulement bon marché mais dangereuse

Écrit en anglais par Michael Rubin et publié dans *The Armenian Mirror-Spectator* en date du 11 avril 2024 Michael Rubin est directeur de l'analyse politique au *Middle East Forum* et chercheur principal à l'*American Enterprise Institute*.

Le 5 avril, le secrétaire d'État américain Antony Blinken et l'administratrice de l'USAID Samantha Power, aux côtés de la présidente de la Commission européenne Ursula von der Leyen et du chef des Affaires étrangères de l'Union européenne Josep Borrell, ont rencontré le Premier ministre arménien Nikol Pachinian à Bruxelles. Le Département d'État a déclaré que l'objectif de cette réunion était de « réaffirmer le soutien à la souveraineté, à la démocratie, à l'intégrité territoriale et à la résilience socio-économique de l'Arménie ». La Turquie a réagi avec fureur et sans ironie, qualifiant l'implication diplomatique de Washington et de Bruxelles de violation de la neutralité puisque l'affaire ne les concernait pas.

Pour souligner l'engagement des États-Unis et de l'Europe en faveur de la sécurité et de la résilience économique de l'Arménie, les États-Unis et l'Union européenne ont promis de décaisser 290 millions de dollars sur quatre ans.

L'administration Biden et les responsables européens voudront peut-être considérer cet argent comme un signe de leur engagement envers l'Arménie, mais l'offre fait en réalité le contraire.

Offrir à l'Arménie 72,5 millions de dollars par an s'apparente à un manque de sérieux. C'est un tiers de ce que les États-Unis accordent à la République centrafricaine, avant même d'y ajouter la contribution européenne, et à peine plus que l'aide à la Moldavie, un ancien État soviétique ayant à peu près la même population. Plutôt que de véritablement soutenir l'Arménie dans son tournant vers l'Occident, le Département d'État et l'USAID donnent donc à l'Arménie une injection pour qu'elle se joigne à la ligne de départ.

Depuis trop longtemps, Blinken et Power cherchent à associer toute concession à l'Arménie à un apaisement à l'égard de l'Azerbaïdjan. Ils le refont maintenant. Il est vrai que l'aide étrangère américaine à l'Azerbaïdjan est en retard sur celle de l'Arménie. Cela n'est pas surprenant, étant donné que l'Azerbaïdjan reçoit chaque année des dizaines de milliards de dollars de revenus provenant des hydrocarbures. Néanmoins, le Département d'État et l'USAID ont augmenté l'aide étrangère à l'Azerbaïdjan de plus de 1100% depuis 2021. De telles actions ont des conséquences. L'Azerbaïdjan aurait reçu plus d'une livraison d'armes par jour, provenant d'Israël et du Pakistan.

Une telle accumulation survient non seulement après que l'Azerbaïdjan ait déraciné et expulsé la population arménienne native du Haut-Karabagh, mais aussi alors qu'il continue d'attaquer



l'Arménie proprement dite et d'occuper les terres arméniennes.

Le poste de surveillance en construction de la frontière azerbaïdjano-arménienne près de Nerkin Khndzoresk était simple : un bâtiment de deux étages destinés à fournir des locaux d'habitation et de travail aux gardes-frontières arméniens de la région. À moins d'un kilomètre de là, le nouveau poste azerbaïdjanais était également visible, avec un radar avancé, des installations d'atterrissage et de carburant pour hélicoptères, des lance-roquettes et des nids de mitrailleuses. En d'autres termes, l'Arménie a construit un poste frontière, l'Azerbaïdjan a construit une base opérationnelle avancée pour poursuivre sa guerre.

Les Arméniens aux États-Unis devraient comparer l'offre américano-européenne avec l'aide accompagnant d'autres processus de paix. L'Égypte reçoit environ 1,3 milliard de dollars par an pour adoucir son adhésion aux accords de Camp David. Cela représente des dizaines de milliards de dollars d'assistance militaire. Israël a reçu encore plus. Il y a ensuite la Corée du Nord, le pays le plus répressif au monde et un État parrain désigné du terrorisme. Après que Pyongyang ait signé l'accord-cadre de 1994, Washington lui a fourni plus de 400 millions de dollars d'aide énergétique malgré ses tricheries persistantes.

La recherche de la paix est louable, mais lorsqu'elle se déroule au hasard, elle compromet la sécurité et encourage l'agression. Blinken et Power ne doivent pas s'attendre à des applaudissements pour leur programme d'aide, mais plutôt à de l'opprobre, car ils montrent à quel point ils ne sont pas sérieux. Une tempête se prépare dans le Caucase. L'Arménie est confrontée à une menace existentielle de la part de l'Azerbaïdjan et à l'idéologie irrédentiste et génocidaire de la Turquie ainsi qu'au péril économique d'un président russe renaissant et vengeur, Vladimir Poutine.

70% des 5,7 milliards de dollars que l'Arménie reçoit en envois de fonds proviennent de Russie. La Russie représente également 40% du marché d'exportation de l'Arménie et une source majeure de

Suite à la page 6

Stabiliser la situation dans le Caucase du Sud sans les États-Unis

Le ministre russe des Affaires étrangères Sergueï Lavrov a déclaré que les États-Unis et leurs satellites veulent empêcher la mise en œuvre des accords conclus entre l'Arménie et l'Azerbaïdjan. Il a fait cette déclaration lors de la conférence de presse tenue à l'issue de la réunion du Conseil des ministres des Affaires étrangères des pays de la CEI à Minsk, capitale de Biélorussie. « Ils tentent d'envahir toutes les régions du territoire post-soviétique, perturbent le processus de stabilisation de la situation dans le Caucase du Sud et veulent empêcher la mise en œuvre des accords conclus entre l'Arménie et l'Azerbaïdjan avec l'aide de la Russie », a-t-il précisé.



Selon Lavrov, les alliés stratégiques de la Russie subissent une énorme pression, mais demeurent fidèles aux valeurs et principes communs sur lesquels reposent les organisations d'intégration, soit l'Union économique eurasiatique (UEE), la Communauté des États indépendants (CEI) et l'Organisation du traité de sécurité collective (OTSC).

Le ministre russe des Affaires étrangères a également exprimé sa conviction que, stratégiquement, la ligne occidentale était vouée à l'échec.

L'Azerbaïdjan rejette tous les documents juridiques sur la démarcation de la frontière avec l'Arménie

Selon le quotidien arménien Hraparak, au cours de la séance à huis clos qui s'est tenue le 12 avril au Parlement et dont l'ordre du jour était les questions de délimitation et de démarcation de la frontière Arménie-Azerbaïdjan, les membres de l'opposition parlementaire ont soumis aux autorités arméniennes les documents juridiques convenus entre les deux pays au cours de plusieurs années et les a exhortés à mettre en œuvre avec eux la démarcation de la frontière.



Parmi ces territoires, au moins sur les quatre mentionnés par le premier ministre arménien Nikol Pachinian ne sont pas considérés comme azerbaïdjanais. Il s'agit du document signé par le secrétaire du Comité central de l'époque, Vladimir Movsisian, au nom de l'Arménie. Il s'agit d'un accord sur les frontières entre les RSS d'Arménie et d'Azerbaïdjan, signé sur la base des conclusions de différents départements et signé par Moscou.

La démarcation de la frontière a été clairement définie dans le document, dont un point mentionne que les fermes d'État Baghanis et Voskepar se verront restituer des territoires équivalents en échange des terres allouées à la construction des maisons du village d'Askipar.

Le vice-premier ministre arménien Mher Grigorian a assuré que tous les documents étaient étudiés par les commissions arméniennes et azerbaïdjanaises, l'unique problème étant le manque d'accord.

Les habitants de Voskepar réprimandent les observateurs de l'UE en visite



Selon le quotidien arménien Hraparak, les observateurs de l'Union européenne (UE) en Arménie ont visité le village de Voskepar. Ils ont également contourné un certain nombre de tronçons de la route Erévan-Noyemberian et sont arrivés à Voskepar via la ville d'Alaverdi.

